

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ (Պ-374-15.11.2019-ՊԻ-011/0) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱԿՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ԿԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	<i>ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ</i>
1.	Հեղինակ Կառավարություն	Նախագիծ	Նախագծում՝ պայմանավորված տերմինաբանական նշանակությամբ՝ «տեսագրություն» բառը փոխարինել «տեսակապ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված 209.1-ին հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ «1. Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննությունը կարող է կատարվել, եթե՝ 1) վկան և տուժողն առողջական վիճակի կամ տարիքի պատճառով չեն կարող ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմին. 2)անհրաժեշտ է ապահովել վկայի և տուժողի անվտանգությունը. 3)հարցաքննության կատարումն անհնարին է կամ անհրաժեշտ է ապահովել նախաքննության արդյունավետությունը:»:	Ընդունվել է	Ընդունվել է

3.	Կառավարություն Հեղինակ	Նախագիծ	Նախագծում՝ դատավարության մասնակիցների համար հավասար պայմանների ապահովման նպատակով՝ «ձայնագրում և տեսագրում» բառերը, որպես հարցաքննության արձանագրման երկու եղանակներ, փոխարինել «տեսաձայնագրառում» բառով որպես մեկ միասնական եղանակ:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդված 1-ին հոդվածով նախատեսված 209.1 հոդվածի 5-րդ մասում հանել հետևյալ բառերը. «իսկ եթե վկան չի առարկում, ապա հաշվի առնելով նաեւ սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով շարադրված առանձնահատկությունները»:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Հեղինակ	Նախագիծ	Նախագծում՝ «նախաքննության մարմնի քննիչը» բառերը փոխարինել «նախաքննության մարմինը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված 209.1 հոդվածի 4-րդ մասում մասում հղում կատարել նաև Օրենսգրքի 208-րդ հոդվածին, խմբագրելով հետևյալ կերպ. «Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննությունը կատարվում է սույն օրենսգրքի 206-րդ և 208-րդ հոդվածներով սահմանված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն հոդվածում շարադրված առանձնահատկությունները.»:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված	Ընդունվել է	Ընդունվել է

			209.1 հողվածի 7-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տեսակապի միջոցով հարցաքննության արձանագրությունը կազմվում է սույն օրենսգրքի 29-րդ եւ 209-րդ հոդվածներով սահմանված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն հոդվածով շարադրված առանձնահատկությունները:»		
9.	Հեղինակ	Նախագիծ	Նախագծում իրականացվել են մի քանի ոչ բովանդակային տեխնիկական փոփոխություններ:	Ընդունվել է	Ընդունվել է